Երևանի քաղաքապետ
Տիգրան Ավինյանին

11.04. 2024թ. ք. Երևան

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ

Հիմք ընդունելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը, հավաքն անցկացնելուն ուղղված գործողություններ ձեռնարկելուց առաջ, տեղեկացնում եմ, որ 2024 թվականի ապրիլի 20-ին ժամը 13:00-ից մինչև 20:00 մեր նախաձեռնությամբ անցկացվելու է հանրային հավաք:

1. Հանրային հավաքը նախատեսվում է անցկացնել Երևան քաղաքի Շարլ Ազնավուրի հրապարակում (ք. Երևան Աբովյան 18 շենքի հարևանությամբ):
2. Հավաքը նախատեսվում է մեկնարկել ապրիլի 20-ին ժամը 13.00-ից և ավարտել մինչև 20:00:
3. Հավաքի նպատակն է քաղաքացիներին իրազեկել <<Դեմոկրատական այլընտրանք>> կուսակցության մշակած՝ Հայաստանում քաղաքական փոփոխություններ իրականացնելու ճանապարհային քարտեզի մասին: Հավաքին նախատեսվում է մոտավորապես 2000 մարդու մասնակցություն: Մասնակիցների մասին հնարավոր առավել ստույգ կլինի կանխատեսումներ անել հավաքից մի քանի օր առաջ՝ սպասվող հանրային արձագանքներից ելնելով:
4. Հավաքին հնարավոր է օգտագործել ստացիոնար կամ շարժական բեմահարթակ (ավտոմեքենայի վրա հարմարեցված), բարձրախոսներ, Հայաստանի Հանրապետության պետական դրոշներ և <<Դեմոկրատական այլընտրանք>> կուսակցության խորհրդանիշներ, հնարավոր են պաստառներ և այլն:
5. Հավաքում կարգադրիչների մասնակցություն չի նախատեսվում:
6. Հանրային հավաքի կազմակերպիչն է հանդիսանում <<Դեմոկրատական այլընտրանք>> կուսակցությունը՝ քաղաքական խորհրդի նախագահ Սուրիկ Վլադիմիրի Սուրենյանցի ղեկավարությամբ

Խնդրում ենք օպերատիվ կարգով, բջջային կապի կամ էլեկտրոնային փոստի միջոցով, տրամադրել տվյալներ Երևանի քաղաքապետարանի այն պաշտոնատար անձի մասին (անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոն, բջջային և աշխատանքային հեռախոսահամարներ, էլեկտրոնային փոսի հասցե), որի հետ հնարավոր կլինի հետագայում օպերատիվ կապ պահպանել՝ նաև «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի հոդված 14-ի 5-րդ կետով սահմանված դեպքերում:

Հարգանքով՝ <<Դեմոկրատական այլընտրանք>>
կուսակցության քաղաքական խորհրդի
նախագահ՝ **Ս. Սուրենյանց**